

# ՍԱՂՄՈՍ 129

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սիոնի թշնամիների վտարման համար աղոթք	Սիոնի թշնամիների վրա հաղթանակի երգ	Ազգային թշնամիներից ազատագրվելու համար աղոթք (Ողբ)	Աղոթք Իսրայելի թշնամիների դեմ	Սիոնի թշնամիների հակառակ
<u>MT ներածություն</u> Աստիճանների երգը				
129:1-4	129:1-4	129:1-8	129:1-4	129:1-2 129:3-4
129:5-8	129:5-8		129:5-8	129:5-8բ 129:8գ

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀՇԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա ազգային սուգ է: «Որդու» գաղափարը կիրառվում է Իսրայելի համար՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ:

Բ. Երկրորդ տունը (Սաղմ. 129:5-8) անեծք է Իսրայելը հալածողների վրա, որոնք ըստ երևույթին օտարականներ են:

Գ. Իսրայելի կյանքի և հավատքի հետ առանցվող նկարագրություններից շատերը վերցված են հողագործությունից: Կարևոր է, որ հիշենք հետևյալ ճշմարտությունները, երբ մեկնաբանում ենք Սաղմոսները:

- դրանք ՀԿ-յան են և ոչ թե ՆԿ-յան (այսինքն՝ գործերի վրա հիմնված ուխտ)
- դրանք կապ ունեն ՀՄԱ-ի միջավայրի հետ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)
- դրանք կենտրոնանում են ուխտի հնազանդության և Աստծո ծրագրում ազգային Իսրայելի կենտրոնական դերի վրա (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)
- դրանք պետք է վերամեկնաբանվեն ՆԿ-ի ավետարանի լույսի ներքո:

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 129:1-4

<sup>1</sup>Հիմա Իսրայելը թող ասի՝

«Իմ մանկության օրերից շատ անգամ ինձ նեղեցին,

<sup>2</sup>Իմ մանկության օրերից շատ անգամ ինձ նեղեցին,

Բայց ինձ չհաղթեցին:

<sup>3</sup>Հերկողներն իմ թիկունքի վրա հերկեցին

Ու երկարացրին իրենց ակոսները»:

<sup>4</sup>ՏԵՐՆ արդար է. Նա ամբարիշտների թոկերը կտրտեց:

**129:1-2** Սաղմոս 129:1, տողը 1-ը առաջին հայացքից կարծես թե անդրադառնում է հավատարիմ անձի իրավիճակին, սակայն այս տողի ԲԱՅԸ (BDB 55, KB 65, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) ցույց է տալիս, որ սա ազգային սուգ է (այսինքն՝ հհ. 1 և 2-ի պատարագային կրկնությունը): Այս Սաղմոսը չի ձևակերպում, թե ինչու է Իսրայելը հալածվում այսքան հաճախակի: Շատ Սաղմոսների պես, ուխտի ժողովրդի կողմից մեղքի ընդունումը չի արտահայտվում, այլ ենթադրվում է: Ղևտացիների 26-ի և 2 Օրինաց 27-28-ի սարսափելի իրողությունները դարձել են ազգային իրողություն:

**129:2բ** Այն փաստը, որ ազգային Իսրայելը մնացել է, ի պատիվ Աստծո ողորմության (տես՝ Սաղաքիա) և Նրա նպատակի է:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**129:3** Սա գյուղատնտեսական նկարագրություն է, որն արտահայտում է տանջանք ու ցավ:

**129:4ա** Իսրայելը մնում է իրենց Աստծո շնորհիվ: Նա հավատարիմ է Իր բնավորությանը և նպատակին (տես՝ Ծննդ. 3:15, Ելից 19:5-6, Եսայի 2:2-4, Միքիա 4:1-3):

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

**129:4բ** Այս «թոկերը» (BDB 721) կարող է վերաբերել՝

1. կենդանիների ծուղակին (տես՝ Սաղմ. 140:5)
2. եզների լուծի կապերին (տես՝ Հոբ 39:10)
3. բանտարկյալի կապերին

AB (էջ՝ 231) առաջարկում է, որ սաղմոսի այս տողը հասկացվի որպես ՀԱՅՑԱԿԱՆ (ինչպես Սաղմ. 129:5-6 է), որը կնշանակեր աղոթք: Եթե ՅԱՀՎԵՆ արդեն իսկ «կտրել» է (BDB 893, KB 1125, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ), ինչի՞ համար են Սաղմ. 129:5-6-ի անեծքները: Դահուղը այն դարձնում է ԿԱՆԻՍՏԵԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ, որն ինչպես ինքն է նշում, հաճախ կարելի է գտնել ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԻ հետ զուգահեռված: Եթե սա ճիշտ է, ապա Սաղմ. 129:4 սկսում է մի նոր պարբերություն (այսինքն՝ Սաղմ. 129:4-8), հետևաբար, «Թող ՅԱՀՎԵՆ կտրի ամբարշտի թոկերը (այսինքն՝ եզների լուծը)» թարգմանության պես կլինի: Անգլերեն թարգմանություններից մեծ մասը (NKJV, NRSV, TEV, NJB, JPSOA, REB) թարգմանում է ԲԱՅԸ որպես անցյալի իրադարձություն:

**129:4-8** Այս պարբերությունը (տես վերի պարբերությունը) նկարագրում է Սիոնի (այսինքն՝ նկատի ունենալով ՅԱՀՎԵԻՆ և Նրա ժողովրդին) բոլոր ատողների վրա անեծքը: Այս համատեքստում, Սիոնը վերաբերում է Իսրայել ազգին՝ Երուսաղեմում գտնվող իր տաճարով որպես կենտրոնը:

1. թող ամաչեն – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ . 129:5

2. թող ետ դառնան – BDB 690, KB 744, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 129:6
3. տանիքի վրայի խոտի պես թող լինեն – BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 129:6  
ա. այն նախքան կանի՝ չորանում է, Սաղմ. 129:6բ  
բ. հնձողը դրանից բերք չի հավաքում, Սաղմ. 129:7
4. ոչ ոք չի օրհնում դրանք, Սաղմ. 129:8:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 129:5-8**

<sup>5</sup>Բոլոր նրանք, ովքեր ատում են Սիոնը,  
Թող ամաչեն ու ետ դառնան:  
<sup>6</sup>Տանիքի վրայի խոտի պես թող լինեն,  
Որ դեռ չհնձված՝ չորանում է:  
<sup>7</sup>Հնձողը չի կարող իր ձեռքը դրանով լցնել,  
Ոչ էլ խուրձ կապողն իր գոգը:  
<sup>8</sup>Անցնողները չեն ասի.  
«ՏԻՐՈՋ օրհնությունը ձեզ վրա լինի,  
Օրհնում ենք ձեզ ՏԻՐՈՋ անունով»:

**129:5բ «թող ամաչեն»** Այս տերմինը (BDB 101, KB 116) ցույց է տալիս ինչ-որ մեկի, որը ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերությունից դուրս է և Նրա դատաստանի տակ: Այն կարող է օգտագործվել՝

1. օտարականների համար
2. ապստամբ իսրայելացիների համար

Այն ցույց է տալիս անհավատարմության կամ անհավատության հետևանքները, որոնք նշվում են Դևտացիների 26 և 2 Օրինաց 27-30 գլուխներում, որպես իրականություն դարձած (տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 621-627):

«Ամաչել» բառի համար տես Սաղմոս 119:6-ի գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄՈԹ

**129:8ա-բ** Սա հնարավոր է վերաբերում է այն օրհնությանը, որը տալիս էին ընկերները, ընտանիքը և հարևանները հնձվորներին (տես՝ Հռութ 2:4):

**129:8բ «ՏԵՐ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

**129:8գ** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեգրյց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսի մեկնարկը պատարագ է ակնարկում:
2. Ինչո՞ւ է Իսրայելը կոչվում «մանուկ»:
3. Ի՞նչ նկատի ունի Սաղմ. 129:4-ի «թոկերը»:
4. Սահմանե՞ք «ամոթը»:
5. Ո՞րն է Սաղմոս 129:8-ի հավանական պատմական միջավայրը: